ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՒ ԹԵՄԵՐՈՒՄ



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀՎԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 17-21-ին, Կ. Պոլսո Հայոց Պատրիարք երջանկահիշատակ Գարեգին արք. Գնազանճյանի մահվան քառասունքի արարողությանը ներկա գտնվելու նպատակով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից Թուրքիա մեկնեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արք. Պոզապալյանը և Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արք. Սանթուրյանը:

Շաբաթ օրը, ապրիլի 18-ին, երջանկահիշատակ Գարեգին արք. Գազանճյանի մահվան քառասունքի առթիվ պատրիարքարանի Սբ. Աստվածածին աթոռանիստ Մայր եկեղեցում Սբ. Պատարագ մատուցեց Գրշ. Տ. Հուսիկ արք. Սանթուրյանը, հընթացս որի քարոզեց Տ. Ներսես արք. Պոզապալյանը՝ «Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո, ո՞ւր է, դժոխք, խայթոց քո» (Ա Կորնթ. ԺԵ 55) բնաբանով:

Հավարտ Սբ. Պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանի նախագահությամբ:

Ապա հոգևոր դասն ու ժողովուրդը ուղևորվեց դեպի Շիշլիի հայոց գերեզմանատուն՝ հանգուցյալ Պատրիարքի շիրիմին հատուկ հոգեհանգստյան պաշտոն կատարելու: Գերեզմանատանը հավաքվել էր մեծ թվով բազմություն՝ Պատրիարքի հարազատները, հոգևոր դասի անդամներ: Արարողության ավարտին դամբանական խոսեց Տ. Ներսես արք. Պոզապալյանը: «Ինչպես որ Հիսուսի հոգին խաչելությունից հետո քառասուն օր իր աշակերտների հետ ապրեց, և քառասներորդ օրը իր աշակերտները բարի ճանապարհ մաղթեցին իրեն դեպի երկնային դրախտ, այսպես էլ մենք այսօր բարի ճանապարհ ենք մաղթում Գարեգին Պատրիարքին դեպի իր վերջնական ճանապարհը: Ես բերել եմ Վեհափառ Հայրապետի եղբայրական հարգանքն ու խոնարհությունը նրա գերեզմանի առջև, ինչպես նաև մեր հավատացյալ ժողովրդի: Մենք այս հարգանքն է, որ կբերենք, որովհետև Գարեգին Պատրիարքն էլ հիսուն տարի իր ծառայությամբ խոնարհվեց իր ժողովրդի և Եկեղեցու առջև»,- ասաց Տ. Ներսես արք. Պոզապալյանը:

Հաջորդ օրը, ապրիլի 19-ին, Սամաթիա թաղի Սբ. Գևորգ եկեղեցում Տ. Ներսես արք. Պոզապալյանը մատուցեց սբ. պատարագ, հընթացս որի Կրկնազատիկի առիթով իր պատգամը հաղորդեց հավատացյալ ժողովրդին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ